

յարգն։ Հայ զրականութիւնը բնաւ պիտի չի տուել, եթէ ողորդելի թերթերն խամրին, անհետանան ընդ միշտ Բայց երբ կը տեսն է օրէ օր խեղճ թերթերու բազմացումն և լաւերուն նուազումն, այդ մեծ հարուած մընէ, որ կը խախտէ Հայ զրականութեան կարեւոր շնորթ։ Արտասահմանի մէջ «Նորկեանք» , «Բանասակը» , «Համամարան» , «Անահիտ» նոր հանձնաներ են, որնց շնչասպառութեամբ հրատարակուին յայտնի նշան մըն է պարտ ու պատշաճ վարձատրութիւն մը չի գտնենուն։ Մանօթ զրագիտներ թ. Շահնազար, Տ. Կոմմարական, Ս. Պարթեւեան, Ս. Գարբիկեան, Տ. Ս. Տիւար, Տ. Սիփիլ, և այլն որոնց սկսան Հայ լրազրութեան նոր և յառաջադիմական գոյն մը տալ, երկար չի տեսեց իրենց գործունէութիւնը, լքան, հեռացան զրական սասպարեզէն, և քաջալերութեան և վարձատրութեան պակասն նախճիրներ գործեց։

Այն օրէն որ զրագէտ կոչուելու արձանաւոր գործիչ մը զիբէք ձեռք կ'առնու՝ հայրենի զրականութեան զարգացման աշխատելու, սատարելու, մի և նոյն օրէն Պէտչիթաշշեանի անստուգութեան, այն զաղափարական ու ախսուր ոգին՝ իր զրասեղանին առջեւ կը կանգնի, կը լիշեցնէ պազգային հոգն և մտատանջութիւնը, և այն է որ կը ջախճանէ կը լքանէ խեղճ զրական նահատակները, որոնք ազգին պակին կ'արժանանան՝ երբ արիարար կը տոկան նոյն սապարէզին մէջ մինչեւ իրենց զեղեցիկ վերջալոյսին խաւարում։

Հ. Ա. ԵՐԵՄԵԱՆ



ԱՐՇԱԼՈՅՍ և ԱՐԵՒԵԼՔ

ԼՈՒԽԱԿՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

(շար. տիս էջ 401)

ՏԱՐԻՆԵՐՈՎ կ'երեւի այլ կուսանաց յայլ և այլ կողմանն Հայոց գեգերին և ցրուիլն. յարեւմուեան կողմն՝ թողով զՄասի յլէկեղեաց գաւառի, ի հիւսիսակողմն՝ զՆոսնէ, որ Կ'ըլլայ քարոզի Վլաց. այսպէս հարկ է որ ուրիշ կողմեր այլ թողուած ըլլան, և միայն իրենց կէսն միարան գտուին իրենց նահատակութեան տեղում՝ ի կեդրոն Ալյարատոյա։ Միայն հարաւային Հայոց կողմերում կենալն և շրջին աւելի ծանօթ է. և թէ ոչ ուղղափի յլէգեսիոյ եկած են հօն՝ այլ յարեւմուեան Հայոց. կամ երկրորդ անգամ եկած են այս կողմն, ի գաւառն թզեռնեաց, ի ոսհման անուանի խոր քաղաքի, ուր յետոյ իրենց կեցած տեղին՝ Ս. Գրիգոր վայելուշ եկեղեցեակ մի շինեց, և ըստ իր սովորութեան՝ Խաչ մի կանգնեց, և տեղն այլ կոչուեցաւ լ. Խաչ. — Աստի՛ Վանայ ծովուն արեւմը տեան եղերքը պատելով եկան կեցանի թուսի, ինչուան հիմայ ծանօթ տեղ. — աստի՛ գէս յարեւմտեան հարաւ կու զան՝ ի գաւառն Մոկաց, և կենան ատեն մի այն տեղ՝ ուր յետոյ Ս. Գրիգոր վանք մի հաստատեց, որ նոյնակն Ս. Խաչ Մոկաց կոչուի, և անուանի ուղարտասեղի մի կ'ըլլայ ի ծ-ԺԱ գարս. և Գր. Նարեկացւոյ ատեն պայծառ շինութեամբ զրադարեալ և հոչակեալ, թէ այս տեղ և թէ քիչ մ'այլ հեռու՝ կեառ կամ կրծատ կոչուած տեղ մի՝ շատ նեղութիւն և հալածանիք կրեն կուսանքն, քրմաց և զանոնք դրդող դիւաց ազդմամբ. բայց Գայիարնէ իր խաչովն և իրեն հետ հոգցող քահանայքն՝ Գամանիկ և Խայի, աղօթիւք և օրհնութեամբ՝ հալածեն զանոնք. որք արգել կ'ըլլային մեր

ՄԱՍԻՍ շաբաթաթերթ ազգին, զրական, քաղաքական եւ գիտական։ Արտօնատէ՛ր Կ. Ա. Իւթիթնեան։ Խմբագիր — Տնօրէն՝ Տիգրան Արփիարեան։ Տարեկան բաժմանը զարդարագին 12 ֆրանք, թրլթատարի ծախսը միամին։

Հասցէ կ. Պոլիս, Ղաղաքիա, Նորատում-կեան խան։